

ՇԱՌԼ-ՏԻՐԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ
ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ.
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ Շառլ-Տիրան Թեքեյան, Արևելյան լեգեոն, Մուսա լեռ, «Դեզե» հաճանավ, Ենովք Քեոշեան, ֆրանսիական բանակ, Գրիգոր Ջանիկյան, Կարեն Արիստակեսյան, Քառամյա պատերազմ, հուշագրություն, ինքնապաշտպանական մարտեր:

Keywords: Charles Tiran Tekeyan, Eastern Legion, mount Musa, cruiser Dese, Enovk Keoshyan, french army, Grigor Janikyan, Karen Aristakesyan, four-year war, memoirs, self-defense battles.

Ֆրանսիացի ծովասպա Շառլ-Տիրան Թեքեյանը (1887-1965) հայ նշանավոր Թեքեյան տոհմի շառավիղ էր, ում նախնիները 17-րդ դարի սկզբին Պարսկաստանից եկել են Կեսարիա: Նա 20-րդ դարի «հայ գրականության ամենէն թանկարժեք դեմքերից մեկի» (Կ. Ջառյան)՝ բանաստեղծ, հրապարակախոս, հանրային գործիչ Վահան Թեքեյանի զարմկն էր, նրա հորեղբոր որդու՝ Միհրան Թեքեյանի ավագ որդին: Շառլ-Տիրան Թեքեյանին վիճակված էր ոչ միայն մասնակցելու Արևելքում Առաջին աշխարհամարտի տարիներին ընթացող ռազմածովային պատերազմին, այլև, իբրև հայի և թարգմանչի, առանձնահատուկ դեր ունենալու ֆրանսիական նավատորմի դրոշմով 1915 թ. սեպտեմբերին Մուսա լեռան հայերի փրկագործությանը և «Արևելյան լեգեոնի» կազմավորմանը:

Ծնվել է Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Ծառայել է Սիրիայում ռազմածովային նավատորմի «Դիզե» հաճանավի վրա՝ որպես «Վերահսկողական ծառայության» 2-րդ կարգի ապաշարային սպա՝ լեյտենանտ: Պարգևատրվել է «Պատվո լեգեոնի ասպետ» և «Պատվո լեգեոնի սպա» շքանշաններով [Թեքեյան, 2020, 77]: Ինքն է, որ թախանձագին խնդրել է բարձրաստիճան սպաներին օգնության հասնել Մուսա լեռան հերոս հայերին, ովքեր քառասուն օր հուսահատ պայքար էին մղում թուրքական կանոնավոր բանակի դեմ [Ծուլիկյան, 2011, փետրվարի 11]: Թեքեյանի վկայությունները ոչ միայն հիշողություններ են, այլև քաղաքական գիտակցություն ու քաղաքակրթական պատասխանատվություն: ««Տեզե» հաճանավուն վրայ կը գտնուէր հայ վերատեսչական ծառայութեան երկրորդ կարգի ապաշարային սպայ թարգմանիչ Թեքեյեանը, որ կը խօսէր փախստականներու մայրենի լեզուով եւ որուն վստահուած էր հայերու հետ բանակցութիւններ վարելու եւ իրավիճակի որքան քաղաքական, այնքան էլ ռազմական յստակ դրութիւնը պարզելու յանձնարարութիւնը» [Գեորգեան, 2015, 86]: Այդ ամենը տեսնելով՝ Թեքեյանը գրի է առնում իր հուշերում և 1915 թ. օրվա մամուլում պարբերաբար հրատարակում դրվագներ հերոսամարտից: Ալեքսանդրիայում արևմտահայերենով տպագրվող նույն թվականի «Արեւ»

շաքաթաթերթում «Դրուագներ սուէտիացոց փրկութենէն» խորագրի տակ հանդիպում ենք «Հայ տղեկը» հուշապատումը՝ «Տիրան Թէքէան, Սեպտ. 15» ստորագրությամբ [Թէքէան, 1915, նոյեմբերի 8, 1]⁶⁰:

Հեղինակը գրում է Մուսա լեռան հերոսամարտի ամենաերիտասարդ մասնակիցներից մեկի՝ բիթիասցի Ենովք Ներսեսի Քեռշեյանի մասին (հետագայում ազգանունը փոխվել է հոր անունով՝ Ներսեսյան), ով ինքնապաշտպանական երրորդ մարտին՝ 1915 թ. օգոստոսի 29-ին ծանր վիրավորվել էր և «Դեզե» նավի տախտակամած տեղափոխվել սեպտեմբերի 10-ի երեկոյան:

Ուշագրավ է «Դեզեի» նավամատյանում արձանագրված այն տեղեկությունը, որն ուղղակիորեն առնչվում է հուշագրության այս հատվածին. «Սեպտեմբերի 11. Նավի վրա բժիշկները վիրահատում են հայ զինվորներին: 15 տարեկան տղան, որը ձեռքի վնասվածք ուներ, իրեն արդեն լավ է զգում: Բոլորը հոգատար են նրա նկատմամբ: Նա նավագի համազգեստ է կրում» [Գեորգեան, 2015, 93]:



**Նկ. 1 Ենովք Քեռշեյան (Ներսեսյան)
Պատանի ազատամարտիկ**

Թեքեյանը պատանուն համեմատում է Հյուզոյի հերոսի՝ Գավրոշի հետ և իր համակրանքը արտահայտում այս փոքրիկ պատումի տեսքով: Նավի անձնակազմը այնքան էր սիրել Ենովքին, որ ուզում էր պահել նավի վրա, սակայն ըստ Ֆրանսիայի Հանրապետության «Զինվորագրման մասին» 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքի, արգելվում էր Ֆրանսիայի, կամ նրա դաշնակիցների հետ պատերազմի մեջ գտնվող պետության հպատակներին ֆրանսիական բանակում զինվորագրել: Ազատատենչ պատանուն ոչինչ չէր հետաքրքրում, բացի թուրքերի դեմ մարտնչելուց. - «Ինձ մի լավ հրացան տվեք, թողեք որ հետ դառնամ, շարունակեմ կռվել», - ասում էր նա: Անգամ քաղցրավենիքին է զարմանքով նայում՝ «Հայաստանի փոքրիկ հովիվը այդպիսի բան չի տեսել: Փորձում է

⁶⁰ Տե՛ս ՀԱԳ թվային պահոցում հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ <https://is.gd/YJdb7J>:


քամահրանքով, կծում, մի նոր կտոր էլ է կծում: Մի պահ դեմքը լրջանում է, ապա ժպիտով ողողվում: Շոկոլադը Ենովքին դուր է գալիս» [Թեքեյան, 2002, 33]:

«Ենովք շաբաթ մը մնաց մեզի հետ: Ուզեցինք նաւուն տղան ընենկ զինք, բայց ասիկա կարելի չեղավ: Հիմա Բօր-Սայիտի բանակատեղին է ան: Կերթամ զինքը տեսնելու ամէն անգամ որ կը հանդիպինք այդ նաւահանգիստը: Մինչև հիմա քիչ մը հօգածութիւն ցուցուցի իրեն, բայց իմ զինուորական կեանքս ինծի թոյլ չի տար կանոնաւորապէս ու մինչեւ վերջը հետեւիլ իրեն: Ինչ որ ալ պատահի, թող չմոռնան իմ պզտիկ հերոսս... » [Թեքեյան, նոյեմբերի 15, 1915, 1]: «Արեւ» շաբաթաթերթի նոյեմբերի 15-ի թիվ 82-ում «Դրուագներ սուէտիացւոց փրկութենէն» խորագրի տակ կրկին հանդիպում ենք Տիրան Թեքեյան ստորագրությամբ «Պղնձէ անօթը» և «Օխայ մը աղուր կարագ» պատմվածքները, որոնք սակայն 1919 թվականին ֆրանսերենով հրատարակված գրքում չեն զետեղվել⁶¹:

Շառլ-Տիրան Թեքեյանի «Քառամյա պատերազմն Արևելքում. Ֆրանս-հայկական համագործակցությունը պատերազմի ընթացքում. Հիշողության էջեր. Մուսա լեռան հայերի փրկությունը ֆրանսիական տորմիդի կողմից. Հայկական լեզեոնը» հուշագրությունը 1919 թվականին լույս է ընծայել Փարիզի «Էռնեստ Լեռու» հրատարակչությունը ֆրանսերեն լեզվով՝ «L’Action Franco-Armenienne. Pendant la guerre. Pages et souvenirs le sauvetage des Armeniens du Mont Moussa par l’Escadre francaise. La legion Armenienne»:



Նկ. 2 Թեքեյան Շ.Տ. Մուսա Լեռան Հայերի փրկությունը: Հիշողության էջեր / Թարգմ.՝ Գ. Ջանիկյան, Դալ, 2002թ.



Նկ. 3 Նույն գրքի տիտղոսաթերթը (ձախից բնագիրը, աջից՝ թարգմանված տարբերակը)

Գիրքը առաջին անգամ ֆրանսերենից հայերեն թարգմանել է Գրիգոր Ջանիկյանը վերնագրելով՝ «Մուսա լեռան հայերի փրկությունը» և լույս ընծայել 2002 թվականին «Դալ» հրատարակչության կողմից: Գ. Ջանիկյանը «Սխրանքի հավերժությունը. Առաջաբանի փոխարեն» հատվածում գրում է. «Այդպիսի մասունք, նշխարիք է ֆրանսիական բանակի ծովասպա Շառլ-Տիրան Թեքեյանի հուշագրությունը, որը 1919 թվականին

⁵⁸ Տե՛ս ՀԱԳ թվային պահոցում հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ <https://is.gd/7KJ60G>:

Փարիզում լույս է տեսել ֆրանսերեն և ապա՝ մոռացության մատնվել: Հայերեն ամբողջական հրատարակման փորձ, համենայն դեպս մինչև հիմա չի արվել: Մինչդեռ ծավալով ոչ մեծ այս գրքույկը բազմաթիվ ուշագրավ, և որ կարևոր է՝ վավերական փաստեր է պարունակում անցած դարասկզբին տեղի ունեցած պատմական իրադարձությունների վերաբերյալ, որոնց որոշ մասը հայտնի չէ նույնիսկ Մուսա լեռան հերոսամարտի մասնակիցների հետնորդներին» [Թեքեյան, 2002, 7]:

Հայերեն թարգմանության համար բնօրինակը թարգմանչին հանձնել է մեր հայրենակից, պրոֆեսոր Վազգեն Ղուկասյանը (ԱՄՆ, Նյու Յորք) [Նույն տեղում, 10]:

Գիրքը սկսվում է «Նախաբանով», հաջորդ էջում տեղադրված է այն ժամանակվա տեղանքի քարտեզը, առկա են բազմաթիվ լուսանկարներ, որոնք հավանաբար արվել են հենց հեղինակի կողմից: 80 էջանոց այս գիրքը բաղկացած է 12 գլխից:

1. Մուսա լեռան հայերի փրկությունը ֆրանսիական տորմիդի կողմից
2. Փրկության գործողությունը
3. Նվիրական առաքելություն. Ազատամարտիկների ազատագրումը
4. Փրկության դրվագներ. Հայ տղան, Ծեր կինը, Ծովաթաղում
5. Նավարկություն թուրքական ափերով
6. Խորհրդավոր կղզում
7. Ինչպես ծնվեց հայկական լեգեոնը
8. Լեգեոնի գլխավոր կազմակերպիչները
9. Արարայի ճակատամարտը
10. Հուլիսի 14-ը Կաստելորիգո կղզում
11. Լեգեոնի զինվորներին. Հայաստանի անկախության հռչակումից հետո
12. Պատասխան Լոթիին

Անչափ ուշագրավ են «Փրկության դրվագներ» խորագրի տակ «Հայ տղան», «Ծեր կինը» և «Ծովաթաղումը» պատմվածքները: «Հայ տղան» որին հանդիպեցինք 1915 թ. «Արեւ»-ի էջերում, այս հուշագրությունում նույնպես ընդգրկված է: Մյուս երկու դրվագները ընթերցելով՝ կրկին համոզվում ենք ֆրանսիական բանակի զինվորների բարի կամքի և հայերի հանդեպ խորին հարգանքի դրսևորումների մասին: «Ծեր կնոջն անպայման պետք էր փրկել: Հնչեց կտրուկ հրաման, ու հաղթանդամ ծովայինները տատիկին պոկեցին իր իշուկից, ուսերին առան, բացառիկ հոգածությամբ նավ բարձրացրին» [Նույն տեղում, 36]:

«Ծովաթաղում» դրվագում ապստամբության հերոսներից Վանայանի թաղումը հրամանատար Վերգուսի հրամանով՝ նավի վրա կատարվում է ֆրանսիական դրոշի ներքո: «Անձնակազմն ու սպաները գլխաբաց շարք են կանգնում, մի հայ «Հայր մերն» է մրմնջում, հնչում են շեփորներն ու դժբախտ քաջամարտիկի աճյունը դանդաղ իջնում է այն անհատակ գերեզմանափոսը, որը ծով է կոչվում» [Նույն տեղում, 38]:

Շառլ-Տիրան Թեքեյանը հավատում էր, որ պատերազմը Եռյակ համաձայնության երկրների հաղթանակով կավարտվի, Կիլիկիայում Ֆրանսիայի հովանավորությամբ հայկական ինքնավար պետություն կստեղծվի, ինքը վերջնականապես կհաստատվի նախնիների բնօրաննում: Սակայն, շատ շուտով իր բոլոր հայրենակիցների նման, հուսահատ

է լինում, վերադառնում է Մարսել, գրում և հրատարակում է պատերազմական հուշերը, ընտրվում ֆրանսիական բանակի Հայ կամավորականների միության պատվավոր նախագահ:

Թեքեյանի «Քառամյա պատերազմն Արևելքում» հուշագրությունը 2020 թվականին իր երկրորդ ծնունդն է առնում և տպագրվում Կարեն Արիստակեսյանի աշխատասիրությամբ:



**Նկ. 4 Թեքեյան Շ.Տ. «Քառամյա պատերազմն Արևելքում» / Աշխատասիր.՝
Կ. Արիստակեսյան (Գրքի
հայերեն կողմի շապիկը)**



**Նկ. 5 Ծովասպա Շառլ-Տիրան
Թեքեյան(1887-1965)**

Գիրքն ունի հետաքրքիր ձևաչափ՝ երկկողմանի է, գեղեցիկ ձևավորված կոշտ կազմով: Մի կողմը ֆրանսերեն բնագրով է, իսկ դարձերեսին՝ արդեն թարգմանված օրինակը: Թարգմանությունը ֆրանսերենից կատարել են Աննա և Սոնա Խալաֆյանները: Գրքի յուրաքանչյուր մաս ունի առանձին էջակալում. հայերեն հատվածը՝ 135, իսկ ֆրանսերենը 127 էջ է: Բազմաթիվ լուսանկարներ, քարտեզներ և փաստաթղթեր ավելի մոտիկից են ծանոթացնում և ամբողջացնում հուշապատումը: Գիրքը հրատարակվել է Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության և մուսալեռցիներ Ջոհրաբ Թազյանի, Հակոբ Զամբազյանի աջակցությամբ: Այն արժևորվում է նաև Կարեն Արիստակեսյանի կազմած «Ծանոթագրություններ» բաժնով, որտեղ հերթական համարակալմամբ, (շուրջ 129 ծանոթագրություն) պարբերություն առ պարբերություն շարադրված են հետաքրքիր մանրամասներ հուշապատումի տեղանքի, հեղինակի, ռազմածովային նավատորմի, արխիվներում պահպանված վավերագրերի, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Եգիպտոսում հրատարակված թերթերի անդրադարձների, ինչպես նաև հերոսամարտի առաջնորդների, հաճանավերի հրամանատարների, Հայկական լեգեոնի,


Արարայի ճակատամարտի և այլնի շուրջ: Ուշագրավ է այն փաստը, որ տարբեր ժամանակներում լույս տեսած այս երկու թարգմանված գրքերը կարծես լրացնում են մեկը մյուսին, ունենալով որոշակի տարբերություններ թե՛ թարգմանության առումով, և թե՛ այլ լուսանկարների առկայությամբ, որոնք էլ ավելի համոզիչ ու իրական են դարձնում հայերի հերոսապատումը:

Գրքում հաճախ հանդիպող ֆրանսիացիների հայերի հանդեպ հարգալից վերաբերմունքը, ինչպես նաև մի շարք ֆրանսիացի սպաների և պաշտոնյաների անուններ, վկայում են թեև բարդ, բայց արդյունավետ համագործակցության մասին: Թեքեյանի պատմական դիտարկումներն ու ռազմաքաղաքական մեկնաբանությունները շատ դեպքերում ունեն վերլուծական որակ՝ դուրս գալով պարզապես հուշագրության դաշտից: Նա քննադատում է նաև դաշնակիցների վարած մի շարք քաղաքական վարքեր, այդ թվում՝ Կիլիկիայից ֆրանսիացիների նահանջը, որը մեծ հիասթափություն է առաջացրել հայերի մոտ:

Գիրքը կարևոր աղբյուր է ոչ միայն հայ-ֆրանսիական ռազմական փոխհարաբերությունների, այլև՝ հայ մտավորականի ներքին պայքարի վկայություն: Այդ պատճառով էլ «Քառամյա պատերազմն Արևելքում» հուշագրությունը կարող են բնութագրել որպես հայկական փորձառությունը ֆրանսիական զինվորական լեզվով պատմող վավերագրական-հումանիստական երկ: Այստեղ համադրվում է երեք հարթություն՝ պատմական վավերագրություն, անձնական հիշողություն և քաղաքակրթական վերլուծություն: Հեղինակը ձևավորում է մի հարթակ, որտեղ հայի և ֆրանսիացու փորձը զուգահեռվում է՝ ոչ միայն որպես դաշնակիցներ պատերազմի դաշտում, այլև որպես մշակութային հենարաններ խաղաղության ակնկալիքով: Այս գիրքը կարելի է դիտարկել միջմշակութային հիշողության ճարտարապետություն, որտեղ հայությունն իր պատմությունը հանձնում է համաշխարհային լսարանին՝ ֆրանսիական բանականության ու ոճի միջոցով:

Հուշագրության որոշ էջեր ֆրանսերեն բնագրից թարգմանվել և «Քաղուածքներ պատերազմի յուշերէս. 1914-1918» խորագրի ներքո, արևմտահայերենով հրատարակվել է արձակագիր, հանրային գործիչ Սուրեն Պարթևյանի (1875-1921) «Արարա. Հայկական լեգէոնը» գրքում՝ տպագրված 1919 թվականին Իզմիրում «Քէշիշեան» տպագրատան կողմից⁶²:

⁶²(Տե՛ս ՀԱԳ թվային պահոցում հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ [<https://is.gd/ouU2Sb>]):



Նկ. 6 Պարթևեան Ս. Արարա. Հայկական լեզունը, Իզմիր, Տպագրություն Քեչիշեան, 1919 (գրքի շապիկը)

Պարթևյանի գրքի 31-37-րդ էջերում հանդիպում ենք «Նուիրական առաքելություն մը» և «Ռազմիկների պարպումը» գրառմամբ երկու դրվագ: Վերնագրից հետո գրված է (Ֆրանսերէն բնագրէն թարգմանուած-Ծ.հ.), հեղինակ՝ Տիրան Թեքէեան, Գօմիսէր ֆրանս. Ծով. Իշխանութեան [Պարթևեան, 1919, 36]:

Մյուս հատվածը, որը վերաբերում է հայկական լեզունի ստեղծմանը, կոչվում է «Ի՞նչպէս ծնաւ հայկական լեզունը», վերնագրից հետո կրկին նույն գրառմամբ՝ (Ֆրանսերէն բնագրէն թարգմանուած-Ծ.հ.), հեղինակ՝ Տիրան Թեքէեան, 1919 Յունուար [Նույն տեղում, 59]:

Ինչպէս նախորդ երկու գրքերը, «Արարա. Հայկական լեզունը» գիրքը առկա է Հայաստանի ազգային գրադարանի առցանց շտեմարաններում: Այս բացառիկ գրքի տիտղոսաթերթի վրայի կնիքները ապացույցն են այն բանի, որ գիրքը մեզ է հասել ԱՄՆ-ից, քանի որ կնիքների վրա տեսնում ենք Ֆրեզնո և Բոստոն գրառումները: Թեքէյանին վերաբերող պարբերությունից զգացվում է հեղինակի հարգալից վերաբերմունքը դեպի հայ ծովասպան՝ «Ֆրանսահայ երիտասարդ հայրենասէր, խանդավառ լավատես մը ներկայացաւ միշտ՝ մեր ազգային ճակատագրին վերաբերմամբ» [Նույն տեղում, 30]:


«Արարա: Հայկական լեզունը» գրքի 59-րդ էջում «Ի՞նչպէս ծնաւ հայկական լեզունը» հատվածի հեղինակը դարձյալ Տիրան Թեքէյանն է՝ «Գօմիսէր ֆրանս. Ծով. Իշխանութեան», գրված 1919 թ. հունվար ամսին: «Անհատները հաշուի չեն առնուիր իտէալին հանդէպ: Երբ մարդ զինուորական է և կամաւոր, միակ գոհունակութիւնը զոր կրնայ ունենալ՝ կատարուած պարտականութեան զգացումն է» [Նույն տեղում, 63]:

2015 թ. լույս տեսած Ժորժ Գէորգեանի «Ֆրանսական ռազմածովային նաւատորմի օգնութիւնը հայերուն 1909 եւ 1915 թթ.» գրքում հանդիպում ենք «Վերատեսչական ծառայութեան երկրորդ կարգի ապաշարային սպայ, թագմանիչ պարոն Թեքէեանի զեկոյցը Մուսա Լերան հայկական ապստամբութեան վերաբերեալ» [Գէորգեան, 2015, 87]:




Նկ. 7 Գեորգեան Ժ. Ֆրանսական ռազմածովային նավատորմի օգնությունը հայերուն 1909 եւ 1915 թթ (գրքի շապիկը)

Շառլ-Տիրան Թեքեյանի գրչին է պատկանում նաև 1929 թվականին Ֆրանսիայում հրատարակված “Marseille, la Provence et les Arméniens” («Մարսելը, Պրովանսը և հայերը») աշխատությունը, որտեղ ներկայացվում է հայերի դերն ու գործունեությունը Մարսելի պատմության մեջ, հատկապես նավահանգստի առևտրային կյանքում [Te’keian, 1929, 80]: Իսկ 1950 թ. լույս է տեսնում “L Ile provençale” աշխատությունը [Te’keian, 1950, 40]: Վերջիններիս ֆրանսերենից դեռ չեն թարգմանվել հայերեն:



Նկ. 8 Te’keian Ch.-D. Marseille, la Provence et les Arméniens, Marseille, 1929
(«Մարսելը, Պրովանսը և հայերը» աշխատությունը)



Նկ. 9 Te’keian Ch.-D. L’ile Provencale, Paris, 1950
(«Պրովանսալ կղզին» աշխատությունը)

Շառլ-Տիրան Թեքեյանից մեզ հասած գրական ժառանգությունը Հայաստանի և Ֆրանսիայի, հայերի և ֆրանսիացիների դարավոր բարեկամության ու գործընկերության, մուսալեոցիների փրկագործության, «Հայկական լեգեոնի» կազմավորման սկզբնական ժամանակաշրջանի դեպքերի մասին է, իսկ հուշապատումի եզակի արժեքը, ինչպես իրավամբ նշում է հեղինակը գրքույկի առաջաբանում, ընթերցողի սիրտն ու հոգին գրավող անկեղծությունն ու արժանապատվությունն է:

Հոդվածի նպատակն է ցույց տալ հայ-ֆրանսիական մշակութային և պատմաքաղաքական առնչությունները 1915 թ. Առաջին աշխարհամարտի տարիներին, մասնավորապես հայկական ինքնապաշտպանական մարտերի ժամանակ ֆրանսիական նավատորմի ցուցաբերած օգնության և մարդասիրական մեծ վերաբերմունքի մասին: Այդ ամենը փաստերի, վավերագրերի տեսքով իրենց տեղն են գտել Հայագգի ծովասպա Շառլ Տիրան Թեքեյանի հուշերում, ով իր անմիջական մասնակցությունն է ունեցել հայերի փրկագործության ժամանակ: Հուշագրությունը տպագրվել է Փարիզում 1919 թվականին և երկար տարիներ մոռացության տրվելուց հետո, 2002 թ. ֆրանսերենից թարգմանվել հայերեն: Կա նաև անդրադարձ հեղինակի գրչին պատկանող այլ հրատարակությունների մասին:

Մեծ հպարտությամբ և խորին երախտագիտությամբ սույն հոդվածը նվիրում եմ Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին և այն «փոքրիկ տղեկի»՝ Ենովք Քեռշեյան (Ներսեսյանի) 125 ամյակին, որի թոռնուհին լինելու պատիվը հենց ինձ է տրված:

SUMMARY

The purpose of the article is to show the Armenian-French cultural, historical and political ties during the First World War of 1915. In particular, for the assistance provided by the French navy during the Armenian self-defense battles and for the great humanitarian attitude. All this found its place in the form of facts in the memoirs of Sh. T. Tekeyan, a marine of Armenian origin, who was directly involved in the rescue of Armenians. The memoirs were published in Paris in 1919 and, after many years of oblivion, translated from French into Armenian. Other publications about that period and events were also included in the article.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գեորգեան Ժ., Ֆրանսական ռազմածովային նավատորմի օգնությունը հայերուն 1909 եւ 1915 թթ., Երևան, ՎՄՎ-Փրինթ, 2015, 144 էջ:
2. Թեքեյան Շառլ-Տիրան, Մուսա Լեռան հայերի փրկությունը. Հիշողության էջեր, Երևան, Դավլ, 2002, 79 էջ:
3. Թեքեյան Շառլ-Տիրան, Քառամյա պատերազմ Արևելքում. Ֆրանս-հայկական գործընկերությունը պատերազմի ընթացքում (հուշագրության էջեր. Մուսա Լեռան հայերի փրկագործությունը ֆրանսիական նավատորմի դով. Հայկական լեգեոնը) / Աշխատասիրությամբ՝ Կ.Ա. Արիստակեսյանի, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2020, 136 էջ:

4. Թեքեան Տ., Դրուագներ սուլտիացոց փրկութենէն. Հայ տղան // Արեւ, պարբերական մամուլ, 1915, Թիւ 79, 8 նոյեմբերի, էջ 1:
5. Թեքեան Տ., Դրուագներ սուլտիացոց փրկութենէն. Հայ տղան // Արեւ, պարբերական մամուլ, 1915, Թիւ 82, 15 նոյեմբերի, էջ 1:
6. Ծուլիկյան Տ., Մուսա լեռան հերոսների իսկական ազատարարը // Արաքս, գրական, մշակութային շաբաթաթերթ, 2011, 11 փետրվարի:
7. Պարթեւեան Ս., Արարա. Հայկական լեզեոնը, Իզմիր, Տպագրութիւն Քէշիշեան, 1919, 143 էջ:
8. Te'keian Charles-Diran. L'ile Provencale, Paris, Imprimerie "Le Soleil", 1950, 40 p.
9. Te'keian Charles-Diran. Marseille, la Provence et les Arme'niens, Marseille, Au Siège De L'institut Historique De Provence, 1929, 80 p.